

Սուրբ Գրոց Սերտողություն : Դաս Թիւ 138

Քրիստոսի դրքերը – Ուրիշ կերպ որով աստուածաբաններ խօսում են Քրիստոսի գործի առթիւ ճանաչւած է որպէս Քրիստոսի «դրքերը» Նրա ստորացումը եւ բարձրացումը: Սրանք վերաբերում են Յիսուսի գոյութեան դիրքերին որպէս Աստուած-մարդը, նայելով Նրա յարաբերութիւնը Իր երկնային փառքի, առտօնութեան, եւ պատուի հետ. նաեւ Նրա աստուածային յատկանշերի գործածութեան. ու նաեւ Նրա յարաբերութիւնը Աստուծոյ օրէնքի նկատմամբ: Այս դրքերը հաստատուած են Ուխտամիաստրը Հաւատոյ Հանգանակում (Գլուխ 8, Բաժին 4), ներկայացնել Քրիստոսի կեանքի եւ գործի մի ամփոփումն (Ա. Պետրոս 1:10-11):

Քրիստոսի ստորացումը – Վերակազ աստուածաբանութիւնը նշում է Քրիստոսի ստորացման հինգ հանգրուաններ՝ լինելով Նրա մարդեղութիւնը, տառապանքը, մահը, թաղումը, եւ դժոխքի իջնելը: Սրա առթիւ եղած դասական հաստատման է Փիլիպպեցիս 2:6-8ը:

Մարդեղութիւն – Քրիստոսի ստորացումը սկսեց Իր մարդեղութեամբ: Պատմութեան մէջ մի յատուկ կէտում Աստուծոյ Որդին՝ հաւասար Հոր եւ Սուրբ Հոգու հետ, չհամարեց Նրա հաւասարութիւնը Աստուծոյ հետ որպէս մի բան շահելու կամ էլ կառչելու, այլ Իր անձն ունայնացրեց («քէնոսիս» վարդապետութիւնը) եւ առաւ Իր վրայ մի մարդկային բնութիւն: Հակառակ այն ինչ որ ոմանք են ուսուցանում, այս չի նշանակում թէ Քրիստոսը դատարկեց (մերկեց) Իրեն Իր աստուածային բնութիւնից եւ ինքնութիւնից. քանի որ ապա Նա կ'դադարէր Աստուած լինելուց (Յովհաննէս 5:18, Կողոսացիս 1:15, 19, Եբրայեցիս 1:3): Իսկ, այս նշանակում է թէ Յիսուսը մի կողմ դրեց (ոչ թէ հրաժարեց) Իր երկնային փառքը, պատիւը, եւ հեղինակութիւնը, եւ ծնեց մի աղքատութեան եւ աննշանութեան վիճակում (Մատթէոս 2:6, Դուկաս 2:7, 9:58): Նա նաեւ թողեց Իր աստուածային յատկանշերի ինքնակամ յայտնութիւնը եւ գործադրութիւնը: Քրիստոսը Իր վեհափառ դիրքը մի կողմ դրեց եւ մի ծառայ դարձաւ, բոլորովին ենթարկելով Հօրը ծրագրին ու կամքին (Եսայիա 42:1, Յովհաննէս 4:34, 6:38, 17:4-5, Բ. Կորնթացիս 8:9, Եբրայեցիս 10:5-9):

Տառապանք – Յիսուսը աւելի խոնարհեցրեց Իրեն ծնելով օրէնքի տակ (Գաղատացիս 4:4-5): Այն մէկը որն էր գերագոյն Օրինատուն, դրեց Իրեն օրէնքի տակ. նախ դրա հնազանդութեան պարտականութեան առմամբ, եւ երկրորդ մեղքի դէմ եղած օրէնքի անէժքի առմամբ: Նա կատարեց այս բոլորը կամաւորապէս եւ փոխանորդաբար որպէսզի փրկանաւորէ Իր ժողովրդին (Ա. Կորնթացիս 15:21, Գաղատացիս 3:13): Քրիստոսի տառապանքները սկսեցին Իր մարդեղութեամբ, եւ շարունակեցին ու աճեցին սաստկութեամբ Իր բոլոր կեանքի ընթացքում (Եսայիա 53:3): Նա տառապեց մարմնում եւ հոգիում. Նա տառապեց Իր մարդկային սահմանափակումների պատճառով. Նա տառապեց Իր շուրջ եղած մեղաւորների ձեռքից, Իր թշնամիների ձեռքից, ու դէտերի եւ Սատանայի ձեռքից: Սրանք բոլորը դատականօրէն կարգադրուած ու պատճառացած էին Աստուծոց, որպէս պատժական տառապանքներ:

Մահ – Քրիստոսի ստորացումը շարունակեց նոյնիսկ աւելի, քանի որ Իր հնազանդութեան ծայրագոյն գործն էր Իր մահը: Իր տառապանքները հասան իրենց լիակատար իրականացման երբ Նա կրեց ամենախիստ, ամենացաւալի, եւ ամենաանոթալի պատիժներից մէկը՝ մեռնելով խաչի վրայ: Թէպէտ Քրիստոսը տառապեց այսպէս սաստիկ տանջանք, սակայն Իր տառապանքների ամենաբարձր կէտը Իր Հօրից ստացած հոգեւոր տառապանքներն էին, որը լքեց Նրան խաչի վրայ, թափելով Իր բարկութեան անէժքը Նրա վրայ՝ Իր մարդկանց մեղքերի համար (Մատթէոս 27:45-46):

Թաղում – Յիսուսի ստորացումը շարունակեց նոյնիսկ աւելի Իր թաղումովը: Անկումից յետոյ, մարդու վրայ եղած անէժքի որպէս մի մաս, Ծննդոց 3:19ում Աստուած ասեց Ադամին թէ մահից յետոյ մարդու ֆիզիքական մարմինը վերադառնալու էր հողը, ենթարկելով ապականութիւն (Մաղմոս 16:10, Գործք Առաքելոց 13:34-37), որպէս մեղքի մի պատիժ եւ ստորացման մի աւելի աստիճան: Ուրեմն Քրիստոսի ստորացումը շարունակեց Իր մարմնի թաղումով գերեզմանի մէջ՝ ապականութեան դիրքում. սակայն Աստուածաշունչը ուսուցանում է որ Նրա մարմինը պահուեց որեւէ ապականութիւնից (Գործք Առաքելոց 2:27, 31):

Դժոխք իջնել – «Նա դժոխք (հէլլիզ) իջաւ» բառերը գալիս են Առաքելոց Հանգանակից, ակնարկելով Քրիստոսի ստորացման վերջին հանգրուանը: Ինչպէս նախկին դասերում ուսումնասիրուեց այս նիւթը իր մանրամասնութեամբ, այսպէս բացատրութիւններ թուում են որպէս Քրիստոսի տառապանքի, մահուան ու թաղման ընդհանուր գաղափարի յաւելեալ մեկնաբանութիւններ, քան թէ Իր ստորացման մի աւելի հանգրուան: Բոլոր այսպէս տեսանկիւններ փորձում են փոխանցել այդ խորհուրդը թէ Քրիստոսը կռացաւ եւ իջաւ ստորացման ամենացածր եւ խորին կէտը, քանի որ Նա ժամանակաւորապէս մնաց մահուան վիճակի տակ:

Այսպէս ստորացումը արտայայտում է Քրիստոսի անսահման սէրը ու շնորհքը մեզի հանդէպ, որը եկաւ այս աշխարհքը որպէս մի մարդ, որպէս մի ծառայ, դնելով Իրեն օրէնքի տակ, որպէսզի փրկել Իր ժողովրդին յաւիտենական դատապարտութիւնից: Այս իրապէս եւ անհասկանալիօրէն մի ծայրագոյն աստիճանի ստորացում է, որի համար մենք կ'պաշտենք Նրան բոլոր յաւերժութեան մէջ: